

ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱՄԵՆԻ ԱԼԵՔ ԵՎ ՄԱՐԻ ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳԱՆՁԱՏԱՆԸ ԲԱՅՎԵՅ ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՅՈՒՅԱՆՄԱՆԻՍ

Հուլիսի 28-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Ալեք և Մարի Մանուկյան գանձարանը բացվեց Նոր Զուղայում և շրջակա բնակավայրերում գրված հայկական ձեռագրերի և այնպեղ պարարատված եկեղեցական արվեստի այն գործերի ցուցահանդեսը, որոնք այժմ պահվում են Մայր Աթոռի թանգարանային հավաքածուներում: Ներկայացված են շուրջ 30 ձեռագրեր, որոնց մի մասը թեև Նոր Զուղայում չեն ընդօրինակվել, բայց պահվել են այնպեղ և այդպիսով նաև իրանահայ մշակույթի մաս են կազմում:

Ցուցահանդեսը բացվեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի թանգարանների վարիչ-պնօրեն Տ. Փառնեն եպիսկոպոս Ավետիքյանի խոսքով: Սրբազան Հայրն իր խոսքում անդրադարձավ իրանահայերի պարմությանը՝ սկսած 1604 թվականից, երբ Շահ Աբասը հազարավոր հայորդիների գաղթեցրեց Սպահան: Սրբազան Հայրը ընդգծեց, որ թեև այդ իրադարձությունը համարվում է մեր պարմության ողբերգական էջերից մեկը, այնուամենայնիվ այն նպաստեց Եվրոպայի ու Արևելքի հետ հայության փոխառնակցությունների առավել ընդլայնմանը: Սրբազան Հայրը նշեց նաև, թե ինչպիսի մեծ ներդրում են ունեցել ջուղայեցիներն Իրանի հասարակական և մշակութային կյանքում:

Ցուցահանդեսի նախապարարատական աշխատանքները կարարել էր Մայր Աթոռի ձեռագրարան վարիչ Վարդան Դևրիկյանը, ով և ներկաներին բավականին մանրամասն ծանոթացրեց ձեռագրերի պարմությանը:

Ցուցահանդեսը կազմակերպվել է Նոր Զուղայի 400-ամյակի առիթով «Փերիա» մշակութային կենտրոնի նախաձեռնությամբ իրականացվող արարեր միջոցառումների շրջանակում: Այս միության նախագահն է Մասիս Բաղդասարյանը:

«Փերիա» մշակութային միության կողմից առանձին գրքով հրարարակվել է նաև Մայր Աթոռի հիշյալ ձեռագրերի և եկեղեցական արվեստի գործերի, ինչպես նաև Երևանի Մարենադարանում պահվող այն ձեռագրերի նկարագրությունը, որոնք գրվել են Նոր Զուղայում կամ պահվել այնպեղ: Բերված են նաև 150 լուսանկարներ, որոնք ներկայացնում են այդ ձեռագրերը և եկեղեցական արվեստի գործերը: «Նոր Զուղայի և հարակից շրջանների հայկական ձեռագրական արվեստը» վերնագրված այս գիրքը հրարարակվել է աշխարասիրությամբ Երևանի Մարենադարանի ձեռագրերի պահպանության բաժնի վարիչ Գևորգ Տեր-Վարդանյանի:

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՄԵՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՂԱՍԱԿԱՐԳ